

ՔԱՆՆԱՆ Գ

Յարեհանդիս Կ. Պոլսոյ հմր 8 ՄԷՃ.
Չ. Գաւառաց 40 ՄԷՃ.
Վեցամեայ Կ. Պոլսոյ 4 ՄԷՃ.
Չ. Գաւառաց 5 ՄԷՃ.
Եւրոպայի թերթի գին 60 փրց.
Յանուարի տողը մէկ անգամի հաւ.
Մարտի 2-ը տողը, երկու անգամի հաւ.
Մայիսի 2-ը տողը, երկու անգամի հաւ.
Յունիսի 2-ը տողը, երկու անգամի հաւ.
Յուլիոյ 2-ը տողը, երկու անգամի հաւ.
Յուլիոյ 2-ը տողը, երկու անգամի հաւ.



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 20 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամէնը 28 ապրիլ.

Պ. Բուսնուստուրոս պալատը կանչը-
ւելով չորս ժամու չափ խորհրդակցեցաւ
թագաւորին հետ, և կը կարծուի ընդ-
հանրապէս թէ նոր նախարարութիւն մը
կազմելու գործն անոր պիտի յանձնուի:

Պետքն 28 ապրիլ.

Կառավարական թերթերը կը մեղադ-
րեն Արմիմ կոմիտէն հրատարակած նամա-
կը, որով Պալատը իշխանին կը զրկուի
աշխարհապարտութիւնը կը հերքէ: Արմիմ
կոմիտէն և Պալատը մէկ գծով թիւն ծա-
ղած ըլլալը հաստատուած է:

Փարիզ 29 ապրիլ.

Շանդորի կոմիտէն վերջապէս հասնելուն
դրոյցը սուս կը հանուի:

Նիշիի դաւաճող ընտրողները մայիս
24ին ընտրութիւն ընելու հրապարակած են:

Պոլսոյ 29 ապրիլ.

Կը հաւատեն թէ Քարապետեան
դիւրեւորուն դէմ յարձակումն երէկ ըս-
կուի: Գոնջա դորապետը քսան հա-
զար զօրով Պալատակապի կողմէն յար-
ձակել է: Սէրբանո մարաշլիստն ալ ու-
րիք քսան հազար զօրով ձախաւի կողմէն
ուզողի յարձակել է: Քարապետեանը հը-
զօր պատնէշներով ամրացած են:

Փարիզ 29 ապրիլ.

Կը հաւատեն թէ Ստամբուլ փաշայի
կնքած փոխաւորութեան պայմանագրով
մինչև յունիս 15 երկարաձգուել է:

Կառավարութիւնը Մարտիկոյ գաւա-
ռական ընդհ. ժողովոյն բռնածորից վը-
րայ վիճարկութիւն պիտի բանայ ազ-
գային ժողովոյ մէջ:

Չախաղովման կեդրոնին հետ բա-
նակցութիւններն անջալոյց ելան:

Երեսփոխին նայելով, ազգային ժողո-
վը չպիտի լուծուի:

Պ. Օլիվիէ՝ զինքն ասկէ առաջ երես-
փոխան ընտրող վարչութիւն բնակացի
գրեւոր խնդրեց որ զինքը նորէն երես-
փոխան ընտրելով Եւրոպայի առջև խօսե-
լու վիճակի մէջ գնեն:

Վիեննա 29 ապրիլ.

Վանսիկից վրայ առաջարկուած օրէն-
քը քուէի դրուելով ընդունուեցաւ քսնի
մը փոխաւորութեամբ, որոյ գէշ էր նա-
խարարութիւնը:

Ստամբուլ 29 ապրիլ.

Յարձակումն այսօր սկսաւ: Սէրբանո
և Բոնջա քանի մը զիւրեր առին Քար-
ապետեան ձեռքէն:

Լոնտոն 30 ապրիլ.

Չորս միլիոն լրացի չնդհանրան փո-
խաւորութիւնն ստորագրութեան համաւե-
ցաւ 101 Յ/4ի հարկերին 4 ու: Ստորագ-
րութեանց դուրսը 15 1/3 միլիոնի հա-
սաւ:

Փարիզ 30 ապրիլ.

Պ. Տըրէյր Թուրքի մէջ ըրած ատե-
նաբանութեան մը մէջ զգացուց որ քիչ
օրէն պիտի հրաժարի նախարարութիւնէն:

Աթէնք 30 ապրիլ.

Նոր նախարարութիւն մը կազմելու
համար Պ. Բուսնուստուրոսի առաջարկած

պայմանները թագաւորը չընդունելով՝ Պ.
Զալիմիսը կանչեց և անոր յանձնեց նոր
նախարարութիւն մը կազմելու գործը:

Լոնտոն 30 ապրիլ.

Օր. Բոն. 42 Յ/16
Կոմ. 1865 65
» 1869 52 Յ/8
» 1871 61 1/2
» 1872 71 Յ/4
Անգլ. Բոն. 92 Յ/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սերմիոյ Միլան իշխանը հինգ-
շաբթի օրը ժամը 6ին Կ. Պոլսոյ հա-
սաւ:

Արքունական իզդէտտին չոգե-
նաւը՝ որոյ մէջ էր իշխանին իւր ու-
ղեկեցներով, ուղղակի Տօլմա Պահճէի
պալատին առջև գնաց կեցաւ: Սէ-
միլայէն արարողապետ Ալի Բիշա
պէյ չոգենաւը գնաց և հոն իշխա-
նին ներկայանալով, որ զօրապետի
շքեղ համազգեստ մը հագած էր,
քանի մը վայրկեան տեսակցեցաւ հե-
տը: Նոյն միջոցին կայսերական նա-
ւակը հոն հասնելով, իշխանն անոր
մէջ նստաւ և ուղղակի կայսերական
պալատն ելաւ:

Պալատին գաւթին մէջ կայսերա-
կան պահապան զօրաց դուստրակ
մը զինքը բարեկեցին, և անմիջա-
պէս վեհ. Սուլթանին քով տարուե-
ցաւ, ուր Մեծ Եպարքոսն և վեհ.
Սուլթանին արքունական պաշտօնա-
տարները ներկայ էին:

Վեհ. Սուլթանը սիրալիր ընդ-
նելութիւն մ'ըրաւ իշխանին, և իւր
կայսերական ձեռքը Օսմանիէի ակա-
նակու. պատուանշանն ու ժապաւէնը
տալով, կէս ժամու չափ խօսակցե-
ցաւ անոր հետ:

Յետոյ իշխանը վեհ. Սուլթանին
քովէն մեկնելով՝ նորէն կայսերական
նաւակը նստաւ, և Սիրքէճի իսկէն-
սին ելնելով, հոն սպասող արքունա-
կան շքեղ կառքով մ'ե. երկու կող-
մէն բաղմաթիւ զինուորական պաշ-
տօնակալաց ուղեկցութեամբ Բ. Դաւ-
աւը գնաց, ուր զօրաց դուստրակ
մը նուագարաններով զինքն ողջու-
նեցին:

Մեծ Եպարքոսը համազգեստով
նախարարաց խորհրդարանին դրան
առջև դիմաւորեց իշխանը միւս նա-
խարարաց հետ, և խիստ պատուա-
ւոր ընդունելութիւն մ'ընելով՝ քա-
ռորդի մը չափ տեսակցեցաւ անոր
հետ:

Անկէց բաժնուելով՝ իշխանն ուղ-
ղակի Պէյքօղ գնաց:

Քիչ մ'եւրը Մեծ Եպարքոսն և
միւս նախարարք ալ փոխադարձ այ-
ցելութեան գնացին իշխանին ի Պէյ-
քօղ:

Ռուստուլէն ու վարնայէն եկած
հեռագրերն հետեւեալ տեղեկութիւն-

ները կուտան Միլան իշխանին ու-
ղեկութեանն և յիշեալ երկու քա-
ղաքաց մէջ դատած ընդունելութեանց
վրայ:

Չորեքշաբթի առաւօտ ժամն 2
1/2ին իշխանին չոգենաւը Ռուստուլ-
հանէրով, գաւառին կուսակալ Ազ-
տիլլահման փաշան չոգենաւը գնաց
և մեծ յարգանքով ողջունեց:

Չոգենաւէն ելնելուն պէս իշխանն
ուղղակի կառավարութեան պալա-
տը գնաց իւր ուղեկցաց հետ, և կու-
սակալը՝ տեղւոյն քաղաքային և զին-
ւորական իշխանութիւններն անոր
ներկայացուց:

Յետոյ կուսակալին և իւր ուղեկ-
ցաց հետ Երկաթուղւոյն կայարանը
գնաց, ուր յատուկ չոգեկաւը մը
կ'սպասէր զինքը վառնա տանելու
համար:

Երբոր Շէյխանճըզ հասաւ, Շոււ-
նուէն դիմաւորութեան եկող կայ-
սերական զօրքերէն զինուորական
պատիւներով ողջունուելով՝ զօրահան-
դէս մ'ըրաւ և անմիջապէս ետքն
ալ փառաւոր նախաճաշ մը տրուեցաւ
իրեն: Յետոյ նորէն չոգեկաւը նըս-
տելով ճանքան շարունակեց և ժա-
մը տասնին վարնա հասաւ:

Հոն ալ մեծ պատիւներով ըն-
դունուելով, կառավարչին և տեղա-
կան իշխանութեանց ուղեկցութեամբ
իզդէտտին չոգենաւը գնաց, և շատ
չանցած՝ չոգենաւը ճանքայ ելաւ:

Չորեքշաբթի օրը Ռուսիոյ կայսեր
ճննդեան յիսուն և վեցերորդ տա-
րեդարձն ըլլալով, Բ. Դրան առաջին
թաղման վրեժ. Ստամբուլէ մէջ
յանուն կայսերական կառավարու-
թեան շնորհաւորութեան գնաց Ռու-
սաց դեսպանին:

Պասիքէթ լրագիրը կըսէ թէ ա-
նուղղակի տրոյց և ծխախոտի մա-
տակարարութեան պաշտօնարաննե-
րէն բաղմաթիւ անօգուտ պաշտօ-
նաւորներ պիտի ճանդուին, որք մե-
ծամեծ անձանց պաշտպանութեան
շնորհիւ մէկ մէկ դուրսի դուրսած են
բարձր ամսականներով:

Արեւմտեւրի Տիմիթրաքի պէյին
կեանքը գեւ. փոխադէ ազատ չէ:
Բժիշկներն անոր ձախ թեւը կտրել
որոշեցին: Կը վախցուի որ մէկ աչ-
քն ալ պիտի կորսնցնէ:

Ռատիկանութիւնը ոճրագործին
հետքը գեւ. չէ կրցած գտնել, բայց
խուրդարկութիւնը կը շարունակէ, և
քանի մը մարդիկ ձերբակալած է:

Լեւիւրի կողմերը ճանապարհոր-
դող Եւրոպացիին մը կողմէ Լէվանթ
էջրալտի գրուած նամակ մը հետեւ-
եալ սրտաճմիկ տեղեկութիւնները
կուտայ սովատանջ ժողովրդոյ վրայ:

ՔԱՆՆԱՆ Գ

Կուրս գացած լրագրաց ճանչ ու-
ծալքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լսոյ, Չինիլի խան, Մախիի գրասեն-
եակը:

Ճամբու ծախքը չվճարուած է:
Ժակ չընդունուիր:

«Տաղնապը խիստ մեծ է. ճան-
քուն վրայ բաղմաթիւ թշուառներ
տեսանք, որք Կ. Պոլսոյ մէջ աշխա-
տութիւն և հաց դանկու յուսով
ճանքայ ելած և կիսամեռ ինկած է-
ին: Այսօրուան օրս Լեւիւրի մէջ
1000էն աւելի մարդիկ կան, որք պա-
տառ մը հացի համար գործ կը փնտ-
ռեն տանց ստակի: Միօթի մեռնող-
ներուն թիւը շատ է. Գ. Ժապարկութիւ-
նը կատարեալ ըլլալու համար՝ Լե-
ւիւրի այժերուն մէջ ալ համաճա-
րակ հիւանդութիւն մ'իշկած է, ո-
րով տեղւոյն բնակչաց զլխաւոր հա-
սոյթներէն մին եղող այս կենդան-
եաց կէսէն աւելին ջարդուեր են»:

Տեղւոյ Տաղնական լրագրաց մէջ
հրատարակեալ տեղեկութեան մը մէջ
ալ հետեւեալ կը կարդանք:

«Ժամանակէ մ'ի վեր Կեսարիոյ,
Էօղլատի և Լեւիւրի գաւառաց վը-
րայ ծանրացած, սովին օգնութիւն
մ'ընելու համար կայսերական կա-
ռավարութիւնն հարկ եղած միջոց-
ները տնօրինեց: Միանգամայն քրի-
ստոնքի մը բացուած է այս սովին
համար, և թղթակցութիւններ կը-
լան գաւառական իշխանութեանց
հետ: Չինուորական սպաներ զրկուած
էին յիշեալ գաւառաց մէջ պղծուե-
լու, ժողովրդոյ պիտոյքը հասկնալու
և տեղական իշխանութեանց այս պա-
րագայիս մէջ իրենց պարտքը կա-
տարելու փութալնուցութիւնը տես-
նելու համար: Վերջապէս թէ՛ չը-
ջակայ գաւառներէն և թէ՛ մայրա-
քաղաքէն բազում նպար և ստակ
զրկուած էին սովատանջ ժողովրդոյ
բաշխուելու համար:

«Սակայն տեղական իշխանու-
թեանց կողմէ եկած տեղեկութիւն-
ներէն կիմացուի թէ այն օգնութիւն-
ները բաւական չեն եղած, և սովն
առաւել ծանրացած է՝ ոչ միայն վերո-
յիշեալ գաւառաց՝ այլ և Գաթիսի գա-
ւառաց մէջ: Ռուսի հարկ եղաւ Ա-
նատուրի ներքին գաւառներէն յո-
րեն փոխադրել տալ այն կողմերը:
Հետեւեալը հրաման գնաց Տիարպէ-
քի իշխանակալին որ անյապաղ յո-
րեն հաւաքէ և սով եղած տեղերը
զրկէ: Արգէն կուսական այս նպա-
տակաւ Մալաթիա և Խարբերդ գը-
նացած է բաղմաթիւ զինուորներով
ու սպանելով:

«Միանգամայն Կարնոյ բանակին
հրամանատար Միւշիլին հրաման դը-
նաց որ շուտով նպար և դրամս ժող-
վէ և Սեբաստիա զրկէ: Դարա—
սար Շարդիի կառավարչին ալ հետագ-
րով հրաման գնաց որ Շուշարի գաշ-
տին մէջ գտնուած ջորերն մեծ մը-
թերքին մէկ մասը Սեբաստիա զրկէ,
ինչպէս նաև չըջակայ ցեղերէն գըն-
ուելիք սուլալները:

Միւս կողմէն 200000 օխայ ա-

իւր զրկուեցաւ Կ. Պօլսէն իղմիտ, որպէս զի չուտով ինկիւրի զրկուի, և փոխադրութեան համար ալ կայսերական բանակէն 180 ձի տրուեցաւ: Վէմէյէիկի և Մուտանեայի նաւահանգիստներէն Մնատօրու տարուած ցորենին ու ալիւրին մաքսի տուրքն ալ վերցաւ:

Կը յուսացուի որ կայսերական կառավարութեան ձեռք առած այս ազգու միջոցները մայրաքաղաքին մէջ բացուած այլ և այլ հանգանակութեանց հետ միանալով, որոց գումարն արդէն 2000 իրայի կը հասնի, տվին տրամաբար հետեւանայ առաջը կառնուի:

ԴՐԱՄԱՆ

Օրմ. Բոնաօլիանէն հաստատուն և բարեօք վիճակ մ'ունեցաւ այս շաբթու եւրոպայի հրապարակաց և հետեւեալը Ղալաթիոյ Պօստին մէջ: Սոր պատճառ կը համարուի ընդհանրապէս Օրմ. Ազգային Պանքա մը հաստատելու համար Սատրգ փաշայի ըրած բանակցութեանց յաջող ելքը մ'ունենալուն յոյսը: Իսկ այս կենտրոնութիւնը՝ հաւանականութեանէ դատ ուրիշ զօրութիւն չունի առայժմ:

Փոխադրութեանց բաժնէ թուղթերուն վրայ ալ մեծ դործողութիւններ եղան, և այս պատճառաւ բաւական վրայ դրին. մասնաւոր 1869 ի փոխադրութեան բաժնիները շատ փոքորուեցան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍԷԱՄԵՐ ՈՒՍՈՒՄԻՅԷ

19 ապրիլ	ուրաթ	իրիկուն	47, 46
20 »	շաբաթ	առաւօտ	
	բացուեցաւ		48, 40
	կէս օր		49 15
Կ. Պօլս 19 ապրիլ			
Սօսիէթէ Ժէնէրալի բաժնիք	Անդ. լիւր	532	
« փոխադրութեան »		4	
Կ. Պօլսոյ Պանքայի »		4, 24	
Քրէտի Ժէնէրալ »		7, 40	
Քրէտի Օսթրո-Թիւրք »		1 50	
Կրկնութեանց հին »	Յր.	100	
	նոր	73	
Փոխ. 1863	»	324	
» 1865	»	325	
» 1869	»	262	
» 1872	»	70 1/2	
Փոխ. 1873	»		
Թրքական	Օրմ. լիւր	5, 15	

Ա. Զ. Բ. Ս. Ի. Ն.

Երեսփոխանական ժողովն երէկ դումարեցաւ Ղալաթիոյ եկեղեցին ընդ նախագահութեամբ Ամեն. Ներսէս Սրբազանին և ատենապետութեամբ Աղաբէկեան վսեմ. Սարգիս Եփէնեանի:

ժամը եօթնուկէսին տոտեան բացւելով, նախնապէս Եփէնեան յայտարարեց թէ Պատրիարքական ընտրութեան խնդիրն ըստ իւր կարծեաց ալ ստիպողականութիւն ունենալով, լաւ կըլլար նախքան իր նիստերու ատենադրութեանց վաւերացումը, որ կընար վիճարանութեանց դուռ բանալ և ժողովին ժամերը դրաւել, ուրիշ յատուկ նիստի մը թողուլ, նոյնպէս գիւմնի անդամաց հրաժարականին խնդիրը, սակայն նորընտիր երեսփոխանաց վաւերացումը ժամանակի կարօտ դարձ մը չըլլալով, նախ այն կատարել և յետոյ պատրիարքական ընտրութեան խնդրոյն ձեռնարկել:

Այս առաջարկութիւնն ընդունուելով՝ նորընտիր այսինքն 8—9 ամսէ ի վեր ընտրուած՝ երեսփոխանաց վաւերացումն անմիջապէս կատարուեցաւ:

Յետոյ Գաղ. Ժողովոյ մէկ անուշարկութիւնը կարգացուեցաւ, որով կը խոստանար Սահմանադրութեան արդէն վերաքննեալ կէտերը Պատրիարքական ընտրութեան տեղեկադրին հետ Բ. Դրան ներկայացնել, և անոնց ալ վաւերացումը չուտով ձեռք բերելու ջանալ, որպէս զի Պատրիարքական ընտրութեան հա-

մար երեսփոխանաց մէկ մասին կողմէ ցոյց տրուած այս արդէնքը վերնայ:

Դիւանն այս յայտարարութիւնը կարգադրեալ ևս, Սահմանադրութեան արդէն վերաքննեալ կէտերն ալ ներկայացուց, որք չորս էին, բայց, ինչպէս որ դիտողութիւն ըրին երեսփոխաններէ ոմանք, այն կէտերէն երկուքը Սահմանադրութեան բացորոշ տրամադրութեանց փոփոխութիւն չէին, այլ բացատրութիւն, և միայն երկուքը կախարարութիւն ունէին, այն էր նախ՝ երեսփոխանութեան ամբողջական 110 թուոյն մեծամասնութեան, այսինքն 71ի տեղը ընտրեալ երեսփոխանաց մեծամասնութիւնը փոխութեալ կէտը, երկրորդն էր Գաղ. Ժողովոյ անդամաց թիւը 22 էն 11ի իջեցնելու կէտը:

Ասոց երկրորդն ալ վերջին Գաղ. Ժողովոյ ընտրութեան ժամանակ Բ. Դրան ծանուցուած և տէրութեան հաւանութիւնն ստացած ըլլալով, կը մնար միայն առաջինը՝ այն է մեծամասնութեան կէտին վաւերացումը խնդրել Բ. Դրանէն: Այս ալ Պատրիարքական ընտրութեան տեղեկադրին հետ կրնայ ներկայանալ Բ. Դրան և հաւանութիւնն առնուիլ:

Երեսփոխաններէ ոմանք, որոց մէք ալ համաձայն ենք, առաջարկեցին որ վերաքննեալ կէտերուն վաւերացման խնդիրը Պատրիարքական ընտրութեան խնդրոյն հետ չկապուի, այլ այս երկու խնդիրները դատ դատ քուէի դրուին, և առաջինը որոշելէ ետեւ, երկրորդին վրայ վիճարանուի, որովհետեւ կը վախճանուի որ այն ըստի մը կէտերը վաւերացման ներկայացուեալ և նորընտիր Պատրիարքն ըստ այնմ ուստել տալու պատրուակին ներքեւ Սահմանադրութեան վերաքննութիւնն իսպառ ետ ձգել տալու դիտում կար: Յետագիւմականք, այն է ինքզինք ձախակողման անուանող երեսփոխանք, սաստիկ դէմ կեցան այս առաջարկութեան, և վիճարանութիւնը պահ մը բանակուի փոփոխուեցաւ. Ժողովը ետեւ մէջէն ալ մէկ երկու ձայն հանաքներ եղան, բայց շատեւ ատենապետ Եփէնեանի յառաջդրական երեսփոխանաց մէկ քանիին բողոքանաց հակառակ՝ երկու խնդիրն ի միասին քուէի դնելով, մեծամասնութեամբ ընդունուեցաւ:

Հետեւեալք՝ ըստ սրտման Ժողովոյն՝ յառաջիկայ ուրբաթ Պատրիարքական ընտրութիւնը պիտի կատարուի, Սահմ. վերաքննեալ կէտերն ալ Բ. Դրան վաւերացմանը ներկայացնելու պայմանաւ:

Պէշիկթաշի գերեզմանատան խնդիրը թէ՛ տէրութեան և թէ՛ ազգին համար միապէս դժացուցիչ կերպիւ կարգադրեցաւ:

Հինգշաբթի օրը Ամեն. Տեղապահ Ներսէս Սրբազան Մաքսուտեան վսեմ. Սիմոն պէյին հետ Բարձր. Մեծ-Խալաթիոյն երթալով, իմացուց թէ ազգը պատրաստ է վեհ. Սուլթանին կամաց համաձայն յիշեալ գերեզմանատունը ծառերով դարգարել և կայսերական քէօշիէն տեսնուած տապանաքարերը հողով և մըշտադարար տուններով ծածկել, այնպէս որ ոչ միայն չառնանին, այլ եւ անհաճոյ տեսարան մը ներկայացնեն:

Մեծ-Խալաթիոյ խիստ դժէքը է այս յայտարարութեան, և չորհրդակալութիւն յայտնել է, որ Հայոց ազգին այս առթիւ ալ որդիական սիրոյ և անձնուիրութեան փորձ մը կուտայ վեհ. Սուլթանին:

Վանէն բաղնայթիւ ազգայնոց ըստարագրութեամբ հետեւեալը զրկուած է մեզ հրատարակելու խնդրանք:

1874 մարտ 18 ի վան.

«Պատանէքն աջը շատ բարձր գրանցուելով կը կոչուէ, և կ'արգէ թէ թէ իրեն համար խիստ ցած գրանք են, . . . Ինչպէս աւելցնելով իրեն անոր իր շնորհքով իրեն ընդ անձն բերել հեռուայ բարձրանալու յուսով ամենէն անարդ մարդոց առջեւ ընդ քար կուգայ:

«Սեյի Տե Գեյի»:

Թէպէտ և ամեն մարդիկ ժամտախտ մ'են ընկերութեան համար, բայց անոնցմէ ամենէն վտանգաւորը՝ մարդկեան դէմ հրապարակաւ դիմադրուելու փորձը և դէն ինքեան հարած եւ զօրապետողին՝ մարդկեան անձնատուր ըլլալու վտանգն է: Գրիտտեանական կրօնին՝ ընկերականութեան ընծայած կատարելութիւններն՝ անոր հաշմութեանց դարմաններն ու սուրբ և սքանչելի միութարութիւններն անուրանալի են. սակայն ստիպուած ենք բաղմանց հետ խոստովանել որ նորա պաշտօնէութեան այսինքն կը ինքնուրուի մարդկութեան կրած քստմեղի դեղձումներն և թշուառութեան մատուցած անթիւ զոհերն՝ մեծ մեծ վերքեր ձգած են նոցա մարմնոյն վրայ, իբրեւ արդիւնք կը ներկայանայ մէկ մասին փառամոլութեանն և հեշտափրութեան:

Ամեն դար, ամեն ազգ՝ ամեն աշխարհ՝ իր լաւ և ոչ լաւ երեւոյթն, իր բարեկիրթ և անկիրթ քաղաքացիներն, մեծերն ու փոքրիկները ներկայացուցած է ընդհանուր աշխարհի թափառութեան վրայ: Եւ որովհետեւ մեր այսօրուան ընտրած աւարական կղերն է, ուստի թողով առաջին դարերու՝ այլ և այլ ազգերու և աշխարհներու՝ Գրիտտական ընկերութեան նուիրած խաչ ի յուս նահատակներուն և արքիւղ դիմաւորներու թուումն մտանցը, առայժմ մեր նպատակն է փոքրիկ ակնարկ մը ձգել մեր ժամանակին, մեր ազգին և միայն մեր երկրին՝ այն է վաղապարհանի ընկերութեան ընծայած երկու վարդապետներու վրայ՝ այն է Խրիմեան Հայրիկի և Պօղոս վարդապետի, թէպէտ այս համեմատութիւնն լոյսի և խաւարի եւ ոյթներիւ ստուգութիւնն մարդկութեան յայտնելու ծաղրելի աշխատութեան պէս բան մ'է, բայց այսու ամենայնիւ յայտնի է որ ամեն շահատակ իր միման, ամեն դիւցազներդութիւնն իր դաւեան ունի, նա զի խաւարին ծանրութիւնն զգալ պէտք ենք, որ յուսն հեշտութիւնն աւելի զգալի ունենանք:

Պօղոս վարդապետին (պարկեշտ բառով մ'ըսենք) սխալմանքները թրււելու տալովութիւնն չպիտի տա՞նք, արդէն հրատարակուած էին և հրատարակուեցան յախանէ անուանէ և ամենայն պարագայիւք: Ուստի իր յաջող կողմին դաւով կը խնդրուի որ ըսէ մեզ իւր բարեմասնութիւններն, տհա կը հարցնենք իրեն—Գիւտուստանիան ես— առանց կարմը բերել կըսէ ոչ:—Ուստի մասէ՞ր ես— ոչ:—Լեզուադէ՞տ ես— ոչ:—Կենցաղադէ՞տ ես— ոչ:—Կրօնադէ՞տ ես— ոչ:—Օրէնսդէ՞տ ես— ոչ:— Կը յարգեմ սոյն բարեմասնութիւնն ունեցող երկրասարդութիւնը— ոչ: Միտնք Մաճիկ լըշիւր եմ: Սրբ. դու ինչ ես:—Ինչու երեսու վրայ ունեցած ազգեր:

* Սեյիամ մը յատենի կը կոչուէ զոս:

ցութեամբ ստիպաներէ եմ:

Կը պատասխանեմք. վարդապետ, այն ազգերութիւնը կամ ունի կամ ոչ. եթէ ունի՝ դու ալ բարբարոս և ազգին կրօն հարստահարութեանց մեղաւորից ոմն ես. եթէ ոչ՝ յայտնի խաւերայ, ապերախտ և փառածգու թեան պատկը պարանքներդ ժողովը ետեւ իր իրականութիւն կըլինեցնող անխիղճ ոմն ես:

Գանդի, ինչպէս դու կը գրես թէ 30 տարուան վանայ աշխատաւորն ես, այդ տարիներէն ի վեր վաստակաւոր կանի չայոց՝ Գիւրտ բարբարոսներու ձեռքով թափուած անմեղ արիւններն, կուսական բռնարարութիւններն, ուղիւղի ամբարշտութիւններն, ընչից և անասնոց յախտաւորութիւններն ու երկեղեցեաց անթիւ կողպուտներն ի համար ո՞վ կրնայ առնուլ մեր են թագաւորական հարստութիւն կըսող այնչափ կողոսպուտներ. . . . որոց դարման տանելու եթէ արամաղիւր կամ կարող մէկըն էիր ու չըրիր, իրաւ որ ամբարիշտ ես. եթէ այդպէս . . . Ինչ հարկ տէրութեան զօրք, զօրաբանակ, կուսակալ կարգել իբր այդ երկրին կենաց ու ընչից պահպան, քանի որ դուն քո ամենազօր խոստովանելի կարողութեամբ ձեռնհաս ես սղոմ. այս՝ եթէ ձեռնհաս էիր և ազգերութեան տէր, որովհետեւ չկամեցար այդպիսի մեծ ծառայութիւն մ'ընել ազգին և տէրութեան, կը հետեւցնեմք ուրեմն, կամակից և թելադրիչ մ'եմ նոյն հարստահարչներուն և նոցա շահերուն ժաւանդակից:

Եթէ ոչ, վարդապետ, ինչ է այդ մասին քո և քու կիներուդ բանադադուանքն: Այո, նոյն իսկ այդչափ համբաւելի ի կշիւ՝ փոխարինուած են ծխաշունչ աւերակներ, անխիղճ հարստահարութիւններ և անթիւ ու անմեղ զոհեր, որք իրար միանալով՝ դարձուածով մը . . . քեզ թեւ ձեպան, առին վերացուցին զքեզ և գլուխդ աստղերուն դարկին. բայց ճշմարտութեան արեւուն շերմութիւնն . . . այն կեղծ թեւերդ պիտի խանձող: Երկիր պիտի կործանին, հողաշանդուած մը պիտի դառնաս, ու ետեւէդ դարձահատութիւն մը պիտի ձգես . . . :

Լսէ Հայոց ազգութիւն, որ ի վաղուց անախ քո ճանցած անխիղճ խրիմեանիդ՝ ի վիշտ, ի նեղութիւններս, մինչ ի մահ խաչարար, անձնուէր շահատակիդ, վատշուէր, սեւագլուխ, և սեւաթուրու դրպարտանաց և հաւածանայ անընկճելի, և ի քեզ սէր, լոյս, յոյս սխաղ նահատակիդ Պատրիարքական պաշտաման դէմ յարուցուած ամբաստանութեանց առաջին փաստը Պօղոս վարդապետի պէս վտառաւոր վերաբաւորի մը ձեռքէն հարկը հաղարի չափ Հայ ժողովրդեան ապագայն պաշտպանել, և նորա անուստութիւնը տարագրելով պատժելն էր: Ինչ փափուկ զգայութիւն . . . այսպիսի արգարի մը . . . պատիժ:

Մնացեալը յաջորդ թուով

Ռոտտով 0 11 ապրիլ 1874

. . . Խմբագիր.

Ճամանակէ մ' ի վեր ինչպէս Ս.

Հախտաւոր ատուածարանած տոնին այս ակադար երկրասարդութեան ձակտին զրոյնց որ քիչ վարդի չպատճառուել ծողովրդեան:

18 Նիսան 1874 Պապը Սէրապէրի

Այս լրագիրը շաբաթը երեք անգամ
կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբ-
թի եւ շաբաթ օրերը : Բաժանորդագրու-
թեան տեղերն են Կ. Պոլիս Զինվորի Խա-
վերի լարիլը թիւ 15 Մասիկի խմբագրատունը
իսկ դաւանաց մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց սենեակները :
ԻԶՄԻՐ. Խոնարանի աղտ Տէպէհան.
ՆԻԿԱՍԻՒՄ. Խոնարանի էջ. Էսկիճեան.
ՊՐՈՒՍՅԱ. Խոնարանի աղտ Թանկէրեան.
ԹԵՐԻՍՏԱՆ. Գովակիրի աղտ Ուղու-
արդեան.
ՏՐԱՊԵՆՏ. Խոնարանի աղտ Էմմանուէլ
ԿԱՐԻՆ. Կարապետ աղտուկի Զա-
քարեան.
ՄՈՒՏ. Մկրտիչ աղտ Գոթիկեան.
ԵԱՏ. Մ. աղտ Խաչիկեան.
ԵՈՒՅՏԱՆ. Մկրտիչ աղտ Աշէնեան.
ՀԱՆԼԵՊ. Նիկողայոս աղտ Տէր Մար-
քարեան.
ԵՐԶՆԿԱՅ. Թաղէոս աղտ Բաղրա-
տունի.
ՍԻՎՐԻՆԻՍԱՐ. Կարապետ աղտ Վար-
դանեան.
Ուրիշ քաղաքներէ ստորագրուի ու-
ղտներն ալ տեղերէն մէկուն հետ կրնան
թղթակցիլ :



ՇԻՐԻԹԻ ԽԱՅՐԻԷԻ ՇՈԳԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1874 ԱՊՐԻԼ 4 ՀԵՆՐԵԱՐԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՁՅԵՒ Ի ՆՈՐ ԿԱՐԳԱՎՐՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱԿՆԵՐԸ

Բաժանորդներէն շնորհակալութիւն

- 11 30 Ենթիմահալէն Պէօլիւք, Թարապիւ, Ենթիւք, Սթէն-
Էմիրի, Բ. Հիւսար, Պէպէք, Արնափուք, Օրթաքէյ, Պէշիկթաշ :
- 12 Պէքթէյ, Բաշապահէ, Գանլընա Ա. Հիւսար Գանալի,
Վանիք, Չէնկէլքէյ, Պէշիկթաշ, Գուզկուճուք :
- 12 Արնափուք, Գուրուչ, Օրթաքէյ, Պէշիկթաշ, Գապաթաշ :
- 12 30 Վանիք, Չէնկէլքէյ, Պէշիկթաշ, Օրթաքէյ, Գուզկուճու-
ճուք, Պէշիկթաշ :
- 1 Ենթիմահալէն Մէքարպ, Պէօլիւք, Թարապիւ, Ենթիւք,
Պոյաճ, Բ. Հիւսար, Պէպէք, Արնափ, Գուրուչ, Օրթաք-
Պէշիկթաշ :
- 1 30 Բ. Է. Ա. Գապաթէն Մէքարպ, Պէօլիւք, Պէքթէյ, Բա-
շապ, Գանլ, Ա. Հիւսար, Վանիք, Չէնկէլքէյ, Պէշիկթաշ, Գուզկու-
ճուք, Թարապիւ :
- 3 Ենթիմահալէն Մէքարպ, Պէօլիւք, Թարապիւ, Ենթիւք,
Էմիրի, Բ. Հիւսար, Պէպէք, Արնափ, Գուրուչէյ, Օրթա-
քէյ, Պէշիկթաշ, Գապաթաշ :
- 3 30 Պէօլիւք, Պէքթէյ, Բաշապ, Գանլ, Ա. Հիւսար, Գանա-
Վանիք, Չէնկէլքէյ, Պէշիկթաշ, Գուզկուճուք :
- 4 Մէքարպիւրնէն, Պէօլիւք, Թարապիւ, Ենթիւք, Էմիրի,
Բ. Հիւսար, Պէպէք, Արնափ, Օրթաք, Պէշիկթաշ :
- 5 30 Ենթիմահալէն Պէօլիւք, Թարապիւ, Ենթիւք, Պոյաճ, Բ. Հի-
սար, Պէպէք, Արնափ, Օրթաք, Պէշիկթաշ :
- 6 45 Ենթիմահալէն Պէօլիւք, Թարապիւ, Պէքթէյ, Ենթիւք, Էմիրի,
Գանլ, Պոյաճ, Բ. Հիւսար, Գանա, Արնափ, Պէշիկթաշ,
Օրթաքէյ, Գուզկուճուք, Պէշիկթաշ, Թարապիւ :
- 7 Արնափուքէյն Գուրուչէյ, Օրթաքէյ, Գուզկուճու-
ճուք, Պէշիկթաշ, Գապաթաշ :
- 8 Ենթիմահալէն Պէօլիւք, Թարապիւ, Ենթիւք, Էմիրի,
Բ. Հիւսար, Պէպէք, Արնափ, Գուրուչ, Օրթաքէյ, Պէշիկթաշ :
- 8 15 Պէօլիւք, Պէքթէյ, Պէշիկթաշ, Բաշապ, Գանլ, Ա. Հիւսար, Գանա-
Վանիք, Չէնկէլքէյ, Պէշիկթաշ, Պէշիկթաշ, Գուզկուճու-
ճուք, Թարապիւ :
- 8 45 Մէքարպիւրնէն Պէօլիւք, Թարապիւ, Պէքթէյ, Սթէն, Պո-
յաճ, Պէպէք, Արնափ, Օրթաքէյ, Պէշիկթաշ :
- 10 45 Ենթիմահալէն Մէքարպ, Պէօլիւք, Թարապիւ, Ենթիւք,
Էմիրի, Բ. Հիւսար, Արնափ, Գուրուչ, Օրթաքէյ, Պէշիկ-
թաշ, Գապաթաշ :

Կաճառէն Էմմանուէլ շնորհակալութիւն

- 1 Պէշիկթաշ, Օրթաք, Արնափ, Պէպէք, Բ. Հիւսար, Պոյաճ, Են-
թիւք, Թարապիւ, Պէօլիւք, Ենթիմահալէն :
- 1 30 Գապաթաշ, Թարապիւ, Պէշիկթաշ, Գուզկուճուք, Օր-
թաքէյ, Պէշիկթաշ, Արնափուքէյ, Գանալի, Բ. Հի-
սար, Պոյաճէյ, Գանլընա, Ենթիւք, Պէքթէյ, Թարա-
պիւ :

- պիւ, Պէօլիւք, Ենթիմահալէն :
- 2 45 Պէշիկթաշ, Օրթաք, Գուրուչ, Արնափ, Պէպէք, Բ. Հիւսար,
Էմիրի, Ենթիւք, Թարապիւ, Պէօլիւք, Մէքարպ :
- 3 30 Թարապիւ, Գուզկուճուք, Պէշիկթաշ, Չէնկէլքէյ, Վանիք, Գանալի,
Ենթիւք, Գանալի, Հիւսար, Գանալի, Բիթաթիւք, Թաշա մահալ,
Էմիր, Բաշապ, Պէքթէյ, Պէօլիւք, Պէօլիւք :
- 3 30 Պէշիկթաշ, Օրթաքէյ, Արնափուքէյ, Պէպէք, Բ. Հի-
սար, Էմիրի, Սթէն, Ենթիւք, Պէքթէյ, Պէքթէյ, Թարապիւ, Պէօլի-
լիւք, Ենթիմահալէն :
- 5 Պէշիկթաշ, Օրթաք, Արնափ, Բ. Հիւսար, Պոյաճ, Ենթիւք,
Պէքթէյ, Թարապիւ, Պէօլիւք, Մէքարպ, Ենթիմահալէն :
- 5 30 Թարապիւ, Պէշիկթաշ, Գուզկուճուք, Օրթաքէյ, Պէշի-
կթաշ, Չէնկէլքէյ, Վանիքէյ, Պէպէք, Արնափուքէյ :
- 6 30 Պէշիկթաշ, Օրթաք, Արնափ, Գանա, Բ. Հիւսար, Էմիրի, Ենթի-
լիւք, Թարապիւ, Պէօլիւք, Մէքարպ :
- 8 Պէշիկթաշ, Օրթաք, Արնափուքէյ, Պէպէք, Բ. Հիւսար,
Էմիրի, Ենթիւք, Թարապիւ, Պէօլիւք, Ենթիմահալէն :
- 9 30 Թարապիւ, Գուզկուճուք, Պէշիկթաշ, Չէնկէլքէյ, Վանիք, Ա. Հիւսար,
Գանլ, Բաշապ, Պէքթէյ :
- 9 45 Գապաթաշ, Պէշիկթաշ, Օրթաքէյ, Գուրուչէյ, Արնափ,
Բ. Հիւսար, Պոյաճ, Ենթիւք, Թարապիւ, Պէօլիւք, Մէքարպ,
Բ. Է. Ա. Գապաթ :
- 10 30 Գուզկուճուք, Պէշիկթաշ, Չէնկէլքէյ, Վանիք, Գանալի, Ա. Հիւսար,
Գանլ, Բաշապ, Պէքթէյ, Պէօլիւք :
- 10 30 Պէշիկթաշ, Օրթաքէյ, Արնափուք, Պէպէք, Բ. Հիւսար,
Էմիրի, Սթէն, Ենթիւք, Թարապիւ, Պէօլիւք, Ենթիմահալէն :
- 11 Գուզկուճուք, Պէշիկթաշ, Չէնկէլքէյ, Վանիքէյ, Ա. Հիւսար,
Գանալ, Գանլընա, Բաշապահէ, Պէքթէյ :
- 11 Պէշիկթաշ, Օրթաքէյ, Գուրուչ, Արնափուքէյ, Պէպէք, Բ. Հիւսար,
Էմիրի, Ենթիւք, Թարապիւ, Պէօլիւք, Ենթիմահալէն :
- 11 30 Գապաթաշ, Պէշիկթաշ, Գուզկուճուք, Օրթաքէյ, Գու-
րուչ, Արնափուքէյ :
- 12 Պէշիկթաշ, Օրթաքէյ, Արնափուք :

Կաճառէն շնորհակալութիւն

Ժամ	Կաճառէն Էմմանուէլ	Ժամ	Կաճառէն Էմմանուէլ
12	45	12	45
12	30	12	40
1	40	1	40
1	30	1	40
1	50	2	5
2	25	2	30
2	50	3	40
3	20	3	40
4	30	4	40
5	30	4	40
5	30	5	40
6	35	6	30
7	30	7	
8	15	8	30
8	40	9	
9	40	9	30
9	40	10	
10		10	20
10	30	10	40
10	40	11	
11	5	11	15
11	25	11	40
11	40	11	50
12		12	5

TCHITLI

ՀԱՆՐԱՍԵՆ ԶՈՐԻ

ԶԻԹԼԻԻ

ՊՐՈԴԱՍԵՐ ՄՈՏ

Կայսերական հրամանագրով Հաշիւալ

Այս հանձնարար ճշգրիտ եւ արագաբար մէջ

ԶԳՈՒՇԱՑԷՐ ԳՈՂԵՐԷՆ

Ամենքն քննարկելով զգոյրդ՝ պատուաւոր վաճառականաց ստա-
րագրութիւնն ու նշանը խորհրդակցութեան են : Եւստ անգամ գէշ
ու աւարշտութեան քննարկութեան քննարկութեան կը ծախան հնա-
րոյններն նշաններով եւ անոնց բուն վաճառքն անուան ու համա-
րումը կը կտարն :

Ուստի մտքորդական փոխին, որ փոքրիկ բժշկական Ախտահար-
յին հաւանութիւնն ստացած է, շատ վաճառքներն պատճառաւ ա-
մենքն շատ կը խորհրդակցուի :

Ուստի զնոյնները շխարհուրու համար շի-
շերուն պատճառը փոխարինել հարկ եղաւ :

Այսուհետեւ բուն Ռոճէի փոխի պէտք է
ճանչել այն շիշերը՝ որոց ծայրերը՝ ներկայ կը-
նիքը կը գտնուի չորս դունով :



LLOYD SUISSE LINES ՍԻՒՍ

Առաջնորդական ընկերութիւն շաբաթը մէկ անգամ Էմմանուէլ շնորհակալութիւն

Կապաճալէն վաճառք, գրամ եւ այլն, ծովու եւ գետի վրայ եւ քաղաքական

Հիւրանական եւ Օսմանեան շնորհակալութիւն եւ առաջատարութեամբ եւ
ցամաքի վրայ ալ երկաթուղիներով փոխադրուի, փոխադրուի գէշ քննարկ-
նաւեւ քաղաքով ամեն կողմ զբոսնելու լեզուն նամակներ եւ ծրարներ :

Աւելի մանրամասն տեղեկութեան համար պէտք է գիտնալ տու
Բարձրագոյն Գործակալ
ՀԵՐՄԱՆ ՀԵԼՊԵՐԿ
Ինճալտիւր
ԱՂԻՐԱՍԵՐ ՈՒՐԵՐԸ
Ի Պաճէ գարու

ROBBOY

Հաւանութիւն ստացած Գաղղիոյ Պէշիկթաշ, Էմմանուէլ եւ Ռուսիոյ մէջ եւ Տօքիոյ
Ժիրոյ ալ մէջ՝ Գաղղիոյ Թարապիւ Կաճառէն շնորհակալութիւն

Արեւն մաքրող գեղարուեստ մէջ այս շիրուպի միշտ առաջին տեղը բռնած է թէ
իւր ազդեցութեամբ որ 25 տարիէ 'ի վեր փորձով հաստատուած է, եւ թէ իւր մի-
մայի բուժական բաղադրութեամբ, Հիւսարի իրանէ, առանց անդիկի մօրթի հի-
ւանութիւնները, որքան խոր եւ ծնողարարութեան ու չափահասութեան պատ-
ճառեալ հիւանդութիւնները նմանապէս եւ մոտաւոր թէ նոր եւ թէ հին տարա-
փոքրիկ հիւանդութիւնները որք ճօրանելով ստիկով, եւ իտալիա ալ բոլորաբար
են բուժիլ :

Կըզանուի Գաղղի Քիւլէր փողոց 12, եւ Կ. Պոլիս Ենթիւք Զամի փողոց թիւ 16, 18
20, Տէրա Սուրապի, Պ. Կանիկի, Օսմանի, Էմմանուէլ, Զօրանդիւրի, Պաշապետի,
եւ Արեւնի գեղարարները :